

Արձանագրություն

նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի
28 հունիսի 1989թ

Արձանագրության հոդվածների ցանկը

Հոդված 1.	Մադրիդյան միությանը պատկանելը
Հոդված 2.	Միջազգային գրանցման ճանապարհով պաշտպանություն ստանալը
Հոդված 3.	Միջազգային հայտ
Հոդված 3bis.	Տարածքային գործողություն
Հոդված 3ter.	Դիմում «տարածքային ընդարձակման» մասին
Հոդված 4.	Միջազգային գրանցման գործողությունը
Հոդված 4bis.	Ազգային կամ տարածքային գրանցման փոխարինումը միջազգային գրանցումով
Հոդված 5.	Միջազգային գրանցման անվավեր ճանաչումը եւ պաշտպանության ընձեռման մերժումը որոշ Պայմանավորված կողմերի նկատմամբ
Հոդված 5bis.	Նշանի առանձին տարրերի օգտագործման օրինականությունը հաստատող փաստաթղթեր
Հոդված 5ter.	Միջազգային գրանցամատյանի գրառումների պատճենները: Նորությունը որոշելու որոնում: Քաղվածքներ Միջազգային գրանցամատյանից
Հոդված 6.	Միջազգային գրանցման գործողության ժամկետը: Միջազգային գրանցման անկախ եւ կախյալ լինելը
Հոդված 7.	Միջազգային գրանցման երկարաձգումը
Հոդված 8.	Միջազգային հայտի եւ միջազգային գրանցման համար վճարներ
Հոդված 9:	Միջազգային գրանցման սեփականատիրոջ փոփոխության մասին գրառում կատարելը
Հոդված 9bis.	Միջազգային գրանցմանը վերաբերող որոշ գրառումների կատարումը
Հոդված 9ter.	Վճարներ որոշ գրառումներ կատարելու համար
Հոդված 9quater.	Մի քանի Պայմանավորված պետությունների միացյալ գերատեսչություն
Հոդված 9quinquies.	Միջազգային գրանցման փոխակերպումը ազգային կամ տարածքային հայտի
Հոդված 9sexies.	Մադրիդյան համաձայնագրի պահպանումը (Ստոկհոլմ)
Հոդված 10.	Ասամբլեա
Հոդված 11.	Միջազգային բյուրո
Հոդված 12.	Ֆինանսներ
Հոդված 13.	Արձանագրության որոշ հոդվածներում ուղղումներ կատարելը
Հոդված 14:	Արձանագրությանը մասնակցելու պայմանները: ՌԻժի մեջ
մտնելը	
Հոդված 15:	Պայմանագրի չեղյալ հայտարարումը
Հոդված 16:	Ստորագրումը: Լեզուները: Ավանդապահի գործառույթները

Հոդված 1
Մադրիդյան միությանը պատկանելը

Սույն Արձանագրությանը մասնակից պետությունները (այսուհետ՝ «Պայմանավորված պետություններ»), եթե նույնիսկ նրանք չեն հանդիսանում նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի անդամ, որը վերանայվել է 1967թ. Ստոկհոլմում եւ փոփոխվել 1979թ. (այսուհետ՝ «Մադրիդյան համաձայնագիր (Ստոկհոլմ)»), եւ 14.1(b) հոդվածում նշված կազմակերպությունները, որոնք հանդիսանում են սույն Արձանագրության մասնակիցները (այսուհետ՝ «Պայմանավորված կազմակերպություններ»), համարվում են նույն Միության անդամները, ինչ Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից երկրները: Սույն Արձանագրության մեջ «Պայմանավորված կողմեր» հղումները նշանակում են Պայմանավորված պետություններ եւ Պայմանավորված կազմակերպություններ:

Հոդված 2
Միջազգային գրանցման միջոցով պաշտպանություն ստանալը

(1) Եթե նշանի գրանցման հայտը (այսուհետ՝ հայտ) ներկայացված է եղել Պայմանավորված կողմի Գերատեսչություն կամ, եթե նշանը արդեն գրանցվել է Պայմանավորված կողմի Գերատեսչության գրանցամատյանում, ապա այդ հայտի (այսուհետ՝ «հիմնական գրանցում») հայտատուն, հաշվի առնելով սույն Արձանագրության դրույթները, իր նշանի պաշտպանությունը կարող է ապահովել Պայմանավորված կողմերի տարածքում՝ այդ նշանը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրոյի գրանցամատյանում գրանցելու միջոցով (այսուհետ համապատասխանաբար՝ «Կազմակերպություն», «Միջազգային բյուրո», , «Միջազգային գրանցամատյան» եւ «միջազգային գրանցում»), պայմանով, որ

- (i) եթե հիմնական հայտը ներկայացվել է Պայմանավորված կողմի Գերատեսչություն, կամ, եթե հիմնական գրանցումը կատարվել է այդպիսի Գերատեսչության կողմից, այդ հայտի հայտատու հանդիսացող անձը կամ գրանցման սեփականատերը տվյալ Պայմանավորված պետության քաղաքացի է, կամ բնակվում է, կամ ունի արտադրական կամ առևտրական գործող ձեռնարկություն տվյալ Պայմանավորված պետությունում.
- (ii) եթե հիմնական հայտը ներկայացվել է Պայմանավորված կազմակերպության Գերատեսչություն, կամ, եթե հիմնական գրանցումը կատարվել է այդպիսի Գերատեսչության կողմից, այդ հայտի հայտատու հանդիսացող անձը կամ գրանցման սեփականատերը տվյալ Պայմանավորված կազմակերպության մասնակից պետության քաղաքացի է, կամ բնակվում է, կամ ունի արտադրական կամ առևտրական գործող ձեռնարկություն տվյալ Պայմանավորված կազմակերպության տարածքում:

(2) Միջազգային գրանցման հայտը (այսուհետ՝ «միջազգային հայտ») պետք է ներկայացվի Միջազգային բյուրո այն Գերատեսչության միջոցով, որտեղ ներկայացվել է հիմնական հայտը, կամ որտեղ կատարվել է հիմնական գրանցումը (այսուհետ՝ «ծագման Գերատեսչություն»), կախված դեպքից:

(3) Սույն Արձանագրության մեջ «Գերատեսչություն» կամ «Պայմանավորված կողմի Գերատեսչություն» հղումները նշանակում են գերատեսչություն, որին Պայմանավորված կողմը հանձնարարել է նշանների գրանցումը, իսկ «նշաններ» հղումը նշանակում է ապրանքային նշաններ եւ սպասարկման նշաններ:

(4) Սույն Արձանագրության մեջ «Պայմանավորված կողմի տարածք» արտահայտությունը նշանակում է. այն դեպքում, երբ Պայմանավորված կողմը պետություն է՝ այդ պետության տարածքը, այն դեպքում, երբ Պայմանավորված կողմը միջկառավարական կազմակերպություն է՝ այն տարածքը, որտեղ կիրառվում է այդ միջկառավարական կազմակերպության ստեղծման մասին պայմանագիրը:

Հոդված 3 ***Միջազգային հայտ***

(1) Ցանկացած միջազգային հայտ, որը ներկայացվում է սույն Արձանագրությանը համապատասխան, պետք է ներկայացվի Հրահանգով սահմանված ձևաթղթի վրա: Ծագման Գերատեսչությունը հաստատում է, որ միջազգային հայտում պարունակվող տվյալները համապատասխանում են հաստատման պահին հիմնական հայտում կամ հիմնական գրանցման մեջ պարունակվող տվյալներին, կախված դեպքից: Բացի այդ հիշյալ Գերատեսչությունը նշում է՝

- (i) հիմնական հայտի դեպքում՝ հայտի թվականը եւ համարը.
- (ii) հիմնական գրանցման դեպքում՝ գրանցման թվականը եւ համարը, ինչպես նաեւ այն հայտի թվականը եւ համարը, որի հիման վրա կատարված է հիմնական գրանցումը:

Ծագման Գերատեսչությունը նշում է նաեւ միջազգային հայտի թվականը:

(2) Հայտատուն պետք է նշի նաեւ այն ապրանքները եւ ծառայությունները, որոնց համար խնդրարկվում է նշանի պաշտպանությունը, ինչպես նաեւ, եթե հնարավոր է, համապատասխան դասը կամ դասերը՝ ըստ Նիցցայի համաձայնագրով հիմնադրված նշանների գրանցման համար ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման: Եթե հայտատուն չի նշում դասերը, Միջազգային բյուրոն ինքն է դասակարգում ապրանքները եւ ծառայությունները ըստ նշված դասակարգման համապատասխան դասերի: Հայտատուի կողմից կատարված ապրանքների եւ ծառայությունների դասակարգումը Միջազգային բյուրոյի կողմից ենթարկվում է ստուգման, որը կատարվում է ծագման Գերատեսչության հետ համաձայնեցված: նշված Գերատեսչության եւ Միջազգային բյուրոյի միջեւ առաջացած տարաձայնության դեպքում, վերջինիս կարծիքը համարվում վճռորոշ:

(3) Եթե որպես նշանի տարբերակիչ տարր հայտատուն խնդրարկում է գույնի պաշտպանությունը, ապա նա պարտավոր է.

- (i) հայտնել այդ մասին եւ իր Միջազգային հայտում նշել խնդրարկվող նշանի գույնը կամ գունային համակցությունը,

(ii) իր միջազգային հայտին կցել տվյալ նշանի գունավոր պատկերները որոնք պետք է ուղարկվեն Միջազգային բյուրոյի ծանուցագրերի հետ. այդ պատկերների օրինակների քանակը որոշվում է Հրահանգով:

(4) Միջազգային բյուրոն անհապաղ գրանցում է այն նշանները, որոնց հայտերը ներկայացվել են 2 հոդվածին համապատասխան: Միջազգային գրանցման թվական է համարվում է ծագման Գերատեսչության կողմից միջազգային հայտի ստացման թվականը, եթե Միջազգային բյուրոն այն ստացել է այդ թվականից սկսած երկու ամսվա ընթացքում: Եթե միջազգային հայտը նշված ժամկետում չի ստացվել, ապա միջազգային գրանցման թվական է համարվում Միջազգային բյուրոյի կողմից միջազգային հայտի ստացման թվականը: Միջազգային բյուրոն շահագրգիռ Գերատեսչություններին անհապաղ տեղեկացնում է միջազգային գրանցման մասին: Միջազգային գրանցամատյանում գրանցված նշանները միջազգային հայտում պարունակվող տվյալների հիման վրա հրապարակվում են Միջազգային բյուրոյի կողմից հրատարակվող պարբերական տեղեկագրում:

(5) Միջազգային գրանցամատյանում գրանցված նշանների հետ ծանոթանալու համար յուրաքանչյուր Գերատեսչություն Միջազգային բյուրոյից ստանում է վերոհիշյալ տեղեկագրի որոշակի քանակության անվճար օրինակներ եւ 10 հոդվածում նշված Ասամբլեայի կողմից (այսուհետ՝ «Ասամբլեա») հաստատված պայմաններով իջեցված գներով որոշակի քանակությամբ օրինակներ: Այսպիսի ծանոթացումը բոլոր Պայմանավորված կողմերի համար համարվում է բավարար, եւ միջազգային գրանցման սեփականատիրոջից ոչ մի այլ բան չի կարող պահանջվել:

Հոդված 3bis ***Տարածքային գործողություն***

Միջազգային գրանցման արդյունքում ծագած պաշտպանությունը տարածվում է Պայմանավորված կողմի վրա միայն միջազգային հայտ ներկայացնող անձի կամ միջազգային գրանցման սեփականատիրոջ հայտարարության համաձայն: Սակայն այդպիսի հայտարարություն չի կարող արվել այնպիսի Պայմանավորված կողմի նկատմամբ, որի Գերատեսչությունը հանդիսանում է ծագման Գերատեսչություն:

Հոդված 3ter ***Դիմում «Տարածքային ընդարձակման» մասին***

(1) Միջազգային գրանցման արդյունքում ծագած պաշտպանությունը Պայմանավորված կողմի վրա տարածելու մասին յուրաքանչյուր հայտարարություն հատուկ պետք է արվի միջազգային հայտում:

(2) Տարածքային ընդարձակման մասին հայտարարությունը կարող է արվել նաեւ միջազգային գրանցումից հետո: Այդպիսի հայտարարությունը պետք է ներկայացվի Հրահանգով սահմանված ձևաթղթի վրա: Ներկայացված հայտարարության մասին Միջազգային բյուրոն անհապաղ գրառում է կատարում Միջազգային գրանցամատյանում եւ այդ մասին ծանուցում է շահագրգիռ Գերատեսչությանը կամ գերատեսչություններին: Այդ հայտարարությունը հրապարակվում է Միջազգային բյուրոյի պարբերական տեղեկագրում: Տարածքային ընդարձակումն ուժի մեջ է մտնում Միջազգային

գրանցամատյանում դիմումի մասին գրառում կատարելու թվականից եւ դադարում է գործել միջազգային գրանցման ժամկետի ավարտման հետ, որին այն վերաբերում է:

Հոդված 4

Միջազգային գրանցման գործողությունը

(1)(a) Գրանցման կամ 3 եւ 3եր հոդվածների դրույթներին համապատասխան կատարված գրառումների թվականից սկսած նշանի պաշտպանությունը յուրաքանչյուր շահագրգիռ Պայմանավորված կողմում իրականացվում է այնպես, ինչպես կիրականացվեր, եթե այդ նշանը անմիջականորեն հայտարկված լիներ տվյալ Պայմանավորված կողմի Գերատեսչություն: Եթե 5(1) եւ (2) հոդվածի համապատասխան Միջազգային բյուրոն չի ծանուցվել որեւէ մերժման մասին կամ, եթե մերժումը, որի մասին այդ հոդվածին համապատասխան ծանուցվել է, հետագայում հետ է կանչվել, ապա նշանի պաշտպանությունը շահագրգիռ Պայմանավորված կողմում նշված թվականից կլինի այնպիսին, ինչպիսին կլիներ, եթե այդ նշանը գրանցվեր տվյալ Պայմանավորված կողմի Գերատեսչության կողմից:

(b) 3 հոդվածով նախատեսված ապրանքների եւ ծառայությունների դասերի նշումը Պայմանավորված կողմերին չի կապում պաշտպանվող նշանի դասերի ծավալի որոշմանը:

(2) Յուրաքանչյուր միջազգային գրանցում օգտվում է արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 4 հոդվածով նախատեսված առաջնության իրավունքից, առանց այդ հոդվածի D բաժնով նախատեսված ձեւական պահանջների պահպանման:

Հոդված 4bis

Ազգային կամ տարածքային գրանցման փոխարինումը միջազգային գրանցումով

(1) Եթե Պայմանավորված կողմի տեղական Գերատեսչությունում ազգային կամ տարածքային գրանցման օբյեկտ համարվող նշանը հանդիսանում է նաեւ միջազգային գրանցման օբյեկտ, եւ եթե երկու գրանցումները կատարված են նույն անձի անունով, ապա միջազգային գրանցումը դիտվում է որպես ազգային կամ տեղական գրանցմանը փոխարինող՝ առանց վերջինիս ուժով ձեռք բերած իրավունքները խախտելու, պայմանով որ

- (i) պաշտպանությունը, որը առաջ է գալիս միջազգային գրանցման արդյունքում, տարածվում է նշված Պայմանավորված կողմի վրա 3եր (1) կամ (2) հոդվածի համապատասխան.
- (ii) ազգային կամ տարածքային գրանցման մեջ թվարկված ապրանքները եւ ծառայությունները թվարկված են նաեւ Պայմանավորված կողմի միջազգային գրանցման մեջ.
- (iii) վերոհիշյալ պաշտպանության ընդլայնումն ուժի մեջ է մտնում ազգային կամ տարածքային գրանցման թվականից հետո:

(2) Հայտարարության համաձայն (1) կետում նշված Գերատեսչությունը պարտավոր է միջազգային գրանցման մասին նշում կատարել իր գրանցամատյանում:

Հոդված 5

***Միջազգային գրանցման անվավեր ճանաչումը եւ պաշտպանության ընձեռման մերժումը
որոշ Պայմանավորված կողմերի նկատմամբ***

(1) Պայմանավորված կողմի Գերատեսչությունը, ստանալով Յեր (1) կամ (2) հոդվածի համապատասխան տվյալ Պայմանավորված կողմում միջազգային գրանցման արդյունքում ծագած պաշտպանության ընդարձակման մասին Միջազգային բյուրոյի ծանուցումը, եթե դա թույլ է տալիս կիրառվող օրենսդրությունը, իրավունք ունի մերժման ծանուցագրում հայտարարել, որ այդ ընդարձակման առարկա հանդիսացող նշանին չի կարող պաշտպանություն ընձեռվել նշված Պայմանավորված կողմում: Այդպիսի մերժումը կարող է հիմնավորվել այնպիսի փաստարկներով, որոնք արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիային համապատասխան կիրառվում են այնպիսի նշանի նկատմամբ, որի հայտը անմիջականորեն ներկայացված է մերժման մասին ծանուցող Գերատեսչություն: Սակայն պաշտպանությունը, նույնիսկ մասնակիորեն, չի կարող մերժվել միայն այն հիմքով, որ կիրառվող ազգային օրենսդրությունը թույլ է տալիս նշանի գրանցումը միայն սահմանափակ թվով դասերի կամ սահմանափակ թվով ապրանքների կամ ծառայությունների համար:

(2) (a) Ցանկացած Գերատեսչություն, որը ցանկանում է օգտվել այդ իրավունքից, բոլոր փաստարկները նշելով, իր մերժման մասին պետք է ծանուցի Միջազգային բյուրոյին այն ժամկետում, որը նախատեսված է տվյալ Գերատեսչության համար կիրառվող օրենքով, սակայն, հաշվի առնելով (b) եւ (c) ենթակետերը, ոչ ուշ քան մեկ տարին լրանալը, հաշված այն թվականից, երբ սույն հոդվածի (1) կետում նախատեսված պաշտպանության տարածման մասին ծանուցումը Միջազգային բյուրոյի կողմից ուղարկվել է տվյալ Գերատեսչությանը:

(b) Չնայած (a) ենթակետին, ցանկացած Պայմանավորված կողմ կարող է հայտարարել, որ սույն Արձանագրության միջոցով կատարված միջազգային գրանցման համար (a) ենթակետով նախատեսված մեկ տարի ժամկետը փոխարինվում է 18 ամսով:

(c) Այդպիսի հայտարարության մեջ կարող է նշվել նաեւ, որ եթե պաշտպանության մերժումը կարող է հանդիսանալ պաշտպանության ընձեռման դեմ ներկայացված առարկության արդյունք, ապա վերոհիշյալ Պայմանավորված կողմի Գերատեսչությունը այդպիսի մերժման մասին կարող է ծանուցել Միջազգային բյուրոյին 18 ամսվա ընթացքում: Այդ Գերատեսչությունը կոնկրետ միջազգային գրանցման նկատմամբ պաշտպանության ընձեռման մերժման մասին կարող է ծանուցել 18 ամսվա ընթացքում միայն այն դեպքում, եթե՝

(i) մինչեւ 18 ամսվա լրանալը նա տեղեկացրել է Միջազգային բյուրոյին 18 ամսյա ժամկետում հնարավոր առարկության մասին եւ

(ii) առարկության հիման վրա մերժման մասին ծանուցումը կատարվել է առավելագույն ժամկետի ընթացքում, որը յոթ ամիս է՝ սկսած առարկություններ ներկայացնելու ժամկետի սկզբից. եթե առարկությունների ժամկետը լրանում է յոթ ամսից շուտ, ծանուցումը պետք է կատարվի առարկությունների համար ժամկետի ավարտից մեկամսյա ժամկետում:

(d) (b) եւ (c) ենթակետերին համապատասխան ցանկացած դիմում կարող ներկայացվել 14 (2) հոդվածով նախատեսված ակտերում, եւ հայտարարությունն ուժի մեջ մտնելու թվականը կլինի նույնը, ինչ հայտարարություն արած պետության կամ միջկառավարական կազմակերպության նկատմամբ սույն Արձանագրության ուժի մեջ

մտնելու թվականը: Այդպիսի հայտարարություն կարող է արվել նաև ավելի ուշ. այս դեպքում այն ուժի մեջ է մտնում մտավոր սեփականության Համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից (այսուհետ՝ «Գլխավոր տնօրեն») այն ստանալուց երեք ամիս անց կամ ցանկացած ավելի ուշ թվականի, որը հայտարարության մեջ նշված է այն միջազգային գրանցումների նկատմամբ, որոնց թվականը նույնը կամ ավելի ուշ է, ինչ հայտարարությունն ուժի մեջ մտնելու թվականը:

(e) Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց տասը տարի լրանալուց հետո, Ասամբլեան իրականացնում է (a)-ից (d) ենթակետերով սահմանված համակարգի գործունեության ստուգումը: Հետագայում նշված ենթակետերի բովանդակությունը կարող է փոփոխվել միայն Ասամբլեայի միաձայն որոշմամբ:

(3) Միջազգային բյուրոն մերժման մասին ծանուցման օրինակներից մեկը անհապաղ ուղարկում է միջազգային գրանցման սեփականատիրոջը: Նշված սեփականատերն ունի առարկություն ներկայացնելու նույն հնարավորությունները, ինչ կունենար, եթե նշանը անմիջականորեն հայտարկված լիներ իր մերժման մասին ծանուցող Գերատեսչություն: (2) (c) (i) կետին համապատասխան տեղեկություն ստանալու դեպքում Միջազգային բյուրոն այն անմիջապես ուղարկում է միջազգային գրանցման սեփականատիրոջը:

(4) Նշանին պաշտպանություն ընձեռելը մերժելու փաստարկները Միջազգային բյուրոն պետք է հայտնի համապատասխան հարցում կատարած շահագրգիռ անձանց:

(5) Ցանկացած գերատեսչություն, որը (1) եւ (2) կետերին համապատասխան Միջազգային բյուրոյին չի ծանուցել կոնկրետ միջազգային գրանցման նկատմամբ նախնական կամ վերջնական մերժման մասին, կորցնում է այդ միջազգային գրանցման նկատմամբ (1) կետով նախատեսված իրավունքը:

(6) Պայմանավորված կողմի տարածքում միջազգային գրանցումն անվավեր ճանաչելու մասին որոշումը չի կարող կայացվել այդ Պայմանավորված կողմի իրավասու մարմինների կողմից, առանց այդ միջազգային գրանցման սեփականատիրոջն իր իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ ժամանակ ընձեռելու: Միջազգային գրանցումն անվավեր ճանաչման որոշման մասին հաղորդվում է Միջազգային բյուրոյին:

Հոդված 5bis

Նշանի առանձին տարրերի օգտագործման օրինականությունը հաստատող փաստաթղթեր

Նշաններում պարունակվող առանձին տարրերի, ինչպիսիք են զինանշանները, զինանշանային վահանները, դիմանկարները, տարբերանշանները, կոչումները, ֆիրմային անվանումները կամ անձանց անունները, բացի հայտատուի անվանումից, կամ այլ նմանատիպ գրառումները, օգտագործման օրինականությունը հաստատող փաստաթղթերը, որոնք կարող են պահանջվել Պայմանավորված կողմերի Գերատեսչությունների կողմից, ազատվում են բոլոր տեսակի օրինականացումներից, ինչպես նաև բոլոր տեսակի վավերացումներից, բացառությամբ ծագման Գերատեսչության վավերացումից:

Հոդված 5եր

Միջազգային գրանցամատյանի գրառումների պատճենները: Նորությունը որոշելու որոնում: Քաղվածքներ Միջազգային գրանցամատյանից

(1) Միջազգային գրանցամատյանում կատարված գրառումների պատճենը Միջազգային բյուրոն տրամադրում է ցանկացած անձի՝ նրա խնդրանքով եւ Հրահանգով սահմանված վճարի մուծման դեպքում:

(2) Միջազգային բյուրոն կարող է նաեւ անցկացնել նորության վճարովի որոնում այն նշանների հիմնապաշարում, որոնք հանդիսանում են միջազգային գրանցման առարկա:

(3) Պայմանավորված կողմերից մեկին ներկայացնելու համար Միջազգային գրանցամատյանից պահանջված քաղվածքները ազատվում են ցանկացած օրինականացումից:

Հոդված 6

Միջազգային գրանցման գործողության ժամկետը: Միջազգային գրանցման անկախ եւ կախյալ լինելը

(1) Նշանի գրանցումը Միջազգային բյուրոյում կատարվում է տասը տարով՝ 7 հոդվածով սահմանված պայմաններով երկարաձգելու հնարավորությամբ:

(2) Միջազգային գրանցման թվականից հինգ տարին լրանալուն պես այդ գրանցումը դառնում է անկախ այն հիմնական հայտից կամ գրանցումից, որի հիման վրա կատարվել է գրանցումը, կամ դեպքից կախված՝ հիմնական գրանցումից, հաշվի առնելով հետեւյալ դրույթները:

(3) Միջազգային գրանցման արդյունքում ծագող պաշտպանությունը, անկախ նրանից, դա հանդիսացել է իրավունքի փոխանցման առարկա թե՛ ոչ, չի կարող խնդրարկվել, եթե մինչեւ միջազգային գրանցման թվականից հինգ տարին լրանալը, հիմնական հայտը կամ գրանցումը, որի հիման վրա կատարվել էր գրանցումը, կամ դեպքից կախված՝ հիմնական գրանցումը հետ է կանչվել, լրացել է գործողության ժամկետը կամ դրանից հրաժարվել են, կամ այն եղել է վերջնական մերժման որոշման, հետաձգման, գրանցամատյանից հանման կամ բոլոր կամ միջազգային գրանցման մեջ թվարկված որոշ ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ անվավեր ճանաչման առարկա: Դա կիրառելի է նաեւ, եթե՝

- (i) հիմնական հայտն անվավեր ճանաչելու մասին մերժման որոշման գանգատարկումը,
- (ii) հիմնական հայտի հետ կանչման կամ չեղյալ ճանաչման, հիմնական հայտի կամ հիմնական գրանցման հիման վրա կատարված գրանցման անվավեր ճանաչման կամ գրանցամատյանից հանման հետ կապված արցերով դատարանին դիմելը կամ դատական քննարկումը կամ
- (iii) հիմնական գրանցման դեմ առարկությունը

հինգ տարին լրանալուն պես, նայած դեպքի, բերում է վերջնական մերժման, չեղյալ ճանաչման, գրանցամատյանից հանման կամ անվավեր ճանաչման մասին որոշման, կամ հիմնական հայտի կամ դրա հիման վրա կատարված գրանցման, կամ հիմնական գրանցման հետ կանչման մասին որոշման, պայմանով, որ այդպիսի գանգատարկումը,

դատական քննարկումը կամ մերժումը սկսվել են մինչև վերոհիշյալ ժամկետի ավարտը: Դա կիրառելի է նաև, եթե հիմնական հայտը հետ է կանչվում կամ հիմնական հայտի հիման վրա կատարված գրանցումից կամ հիմնական գրանցումից հինգ տարին լրանալուց հետո հրաժարվում են, պայմանով, որ հետ կանչման կամ մերժման ժամանակ նշված հայտը կամ նշված գրանցումը հանդիսանում են (i) (ii) (iii) ենթակետերից որևէ մեկով նախատեսված ընթացակարգի առարկա, եւ որ այդ ընթացակարգն սկսվել է մինչև նշված ժամկետի ավարտը:

(4) Ծագման Գերատեսչությունը, Հրահանգով նախատեսված կարգով, (3) կետին համապատասխան հանգամանքների եւ որոշումների մասին տեղեկացնում է Միջազգային բյուրոյին, իսկ Միջազգային բյուրոն այդ մասին տեղեկացնում է շահագրգիռ կողմերին եւ Հրահանգով սահմանված կարգով կատարում է համապատասխան հրապարակում: Անհրաժեշտության դեպքում Ծագման Գերատեսչությունը կարող է խնդրանքով դիմել Միջազգային բյուրո՝ գրանցումը սահմանված կարգով հանել միջազգային գրանցամատյանից, եւ Միջազգային բյուրոն կատարում է այդ խնդրանքը:

Հոդված 7

Միջազգային գրանցման երկարաձգումը

(1) Ցանկացած միջազգային գրանցում կարող է երկարաձգվել եւս 10 տարով՝ հաշված նախորդ գրանցման ժամկետը լրանալու թվականից, հիմնական եւ, հաշվի առնելով 8(7) հոդվածը, 8(2) հոդվածով նախատեսված լրացուցիչ եւ հավելյալ տուրքերը վճարելու միջոցով:

(2) Ժամկետի երկարաձգման ժամանակ նախորդ գրանցման վերջին տեսքի ոչ մի փոփոխություն չի թույլատրվում:

(3) Պաշտպանության ժամկետի լրանալուց վեց ամիս առաջ Միջազգային բյուրոն ոչ պաշտոնական ծանուցագիր ուղարկելով հիշեցնում է միջազգային գրանցման սեփականատիրոջը, կամ, անհրաժեշտության դեպքում՝ նրա հավատարմատարին, նշված ժամկետը լրանալու ճիշտ թվականը:

(4) Հրահանգով նախատեսված լրացուցիչ վճարի մուծման դեպքում միջազգային գրանցման երկարաձգման համար տրվում է վեցամյա արտոնյալ ժամկետ:

Հոդված 8

Միջազգային հայտի եւ միջազգային գրանցման համար վճարներ

(1) Ծագման գերատեսչությունն իրավունք ունի իր հայացողությամբ միջազգային հայտ ներկայացնելու կամ միջազգային գրանցումը երկարաձգելու համար սահմանելու եւ հայտատուից կամ միջազգային գրանցման սեփականատիրոջից իր օգտին գանձելու ազգային վճար:

(2) Նշանի գրանցումը Միջազգային բյուրոյում իրականացվում է միջազգային տուրքի վճարման վճարման դեպքում, որը, հաշվի առնելով 7(a) կետի դրույթները, ներառում է՝

(i) հիմնական տուրք,

(ii) լրացուցիչ տուրք Միջազգային դասակարգման երեքից ավելի յուրաքանչյուր դասի համար, որոնց վերաբերում են ապրանքները կամ ծառայությունները, որոնց համար օգտագործվում է նշանը,

(iii) լրացուցիչ տուրք 3(ter) հոդվածին համապատասխան պաշտպանության ընդհանրական յուրաքանչյուր հայտարարության համար:

(3) Սակայն (2) (ii) կետում նշված լրացուցիչ տուրքը կարող է վճարվել Հրահանգով սահմանված ժամկետում, առանց միջազգային գրանցման թվականի վրա ազդելու, եթե ապրանքների կամ ծառայությունների դասերի քանակը որոշվել կամ վիճարկվել է Միջազգային բյուրոյի կողմից: Եթե նախատեսված լրացուցիչ տուրքը չի վճարվել մինչև սահմանված ժամկետի լրանալը, կամ եթե ապրանքների կամ ծառայությունների ցանկը հայտատուի կողմից չի կրճատվել անհրաժեշտ չափով, ապա միջազգային հայտով հետագա գործավարությունը համարվում է դադարեցված:

(4) Միջազգային գրանցման համար զանազան մուտքերից տարեկան եկամուտը, բացառությամբ (2) (ii) եւ (iii) կետերով նախատեսված տուրքերի մուտքերի, Միջազգային բյուրոյի կողմից բաշխվում է Պայմանավորված կողմերի միջև հավասարաչափ, հանելով սույն Արձանագրության կատարման համար ծախսերը:

(5) (2) (ii) կետում նշված լրացուցիչ տուրքերից գոյացող գումարները յուրաքանչյուր տարին լրանալուց հետո բաշխվում են շահագրգիռ Պայմանավորված կողմերի միջև այն նշանների քանակին համեմատական չափով, որոնց համար ավարտված տարվա ընթացքում խնդրարկվել է պաշտպանություն, իսկ Պայմանավորված կողմերի նկատմամբ, որոնք իրականացնում են նախնական փորձաքննություն, այդ քանակը կհաշվվի Հրահանգով սահմանված գործակցի միջոցով,:

(6) (2) (iii) կետով սահմանված հավելյալ տուրքերից առաջացող գումարները, բաշխվում են այն նույն կանոններին համապատասխան, որոնք նախատեսված են (5) կետում:

(7) (a) Ցանկացած Պայմանավորված կողմ կարող է հայտարարել, որ յուրաքանչյուր միջազգային գրանցման նկատմամբ, որում նա նշված է 3ter հոդվածին համապատասխան, ինչպես նաև այդպիսի միջազգային գրանցման երկարաձգման նկատմամբ, լրացուցիչ կամ հավելյալ տուրքերից կատարվող մասնահանումների փոխարեն նա ցանկանում է ստանալ տուրք (այսուհետ՝ «անհատական տուրք»), որի չափը նշված է հայտարարության մեջ եւ կարող է փոփոխվել հետագա հայտարարությունների մեջ, սակայն չի կարող գերազանցել այն գումարները, որոնք նշված Պայմանավորված կողմի Գերատեսչությունը իրավունք ունի ստանալ հայտատուից տաս տարի ժամկետով նշանի գրանցման համար կամ գրանցման սեփականատիրոջից այդ Գերատեսչության գրանցամատյանում նշանի գրանցումը տաս տարի ժամկետով երկարաձգելու համար, նվազեցված միջազգային գործընթացի արդյունքում առաջացող խնայողությունների չափով:

Եթե վճարվում է անհատական տուրք, ապա

(i) չի պահանջվում (2) (ii) կետով նախատեսված ոչ մի լրացուցիչ տուրք, եթե 3(ter) հոդվածի համաձայն նշված են միայն այն Պայմանավորված կողմերը, որոնք սույն ենթակետին համապատասխան հայտարարություն են ներկայացրել,

- (ii) (2) (iii) կետով նախատեսված ոչ մի լրացուցիչ տուրք չի պահանջվում ցանկացած Պայմանավորված կողմի նկատմամբ, որը սույն ենթակետին համապատասխան հայտարարություն է ներկայացրել:

(b) (a) ենթակետին համապատասխան ցանկացած հայտարարություն կարող է կատարվել 14(2) հոդվածում նախատեսված ակտերում, ընդ որում այդ հայտարարության ուժի մեջ մտնելու թվական է համարվում հայտարարություն ներկայացնող պետության կամ միջկառավարական կազմակերպության նկատմամբ սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու թվականը: Այդպիսի հայտարարություն կարող է արվել նաև ավելի ուշ. այս դեպքում այն ուժի մեջ է մտնում Գլխավոր տնօրենի կողմից դրա ստացման թվականից երեք ամիս հետո կամ ցանկացած այլ ավելի ուշ թվականի, որը նշված է հայտարարության մեջ միջազգային գրանցումների նկատմամբ, որոնց թվականը կլինի նույնը, ինչ հայտարարությունն ուժի մեջ մտնելու թվականը, կամ ավելի ուշ այլ թվական:

Հոդված 9

Միջազգային գրանցման սեփականատիրոջ փոփոխության մասին գրառում կատարելը

Այն անձի դիմումի համաձայն, ում անունով գրառում է կատարվել միջազգային գրանցման մասին, կամ *ex officio* կատարած շահագրգիռ գերատեսչության խնդրանքով, կամ շահագրգիռ անձի խնդրանքով Միջազգային բյուրոն Միջազգային գրանցամատյանում գրառում է կատարում այդ գրանցման սեփականատիրոջ ցանկացած փոփոխության մասին բոլոր կամ որոշ Պայմանավորված կողմերի նկատմամբ, որոնց տարածքում գործում է նշված գրանցումը, եւ գրանցման մեջ նշված բոլոր կամ որոշ ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ, պայմանով, որ նոր սեփականատերը 2(1) հոդվածին համապատասխան իրավունք ունի միջազգային հայտեր ներկայացնելու:

Հոդված 9bis

Միջազգային գրանցմանը վերաբերող որոշ գրառումների կատարումը

Միջազգային բյուրոն Միջազգային գրանցամատյանում կատարում է հետեւյալ գրառումները.

- (i) միջազգային գրանցման սեփականատիրոջ հասցեին կամ անվանը վերաբերող ցանկացած փոփոխություն,
- (ii) միջազգային գրանցման սեփականատիրոջ կողմից հավատարմատարի նշանակումը եւ ցանկացած այլ տեղեկություններ այդ հավատարմատարի մասին,
- (iii) միջազգային գրանցման մեջ նշված ապրանքների եւ ծառայությունների ցանկի ցանկացած սահմանափակումների մասին, որոնք վերաբերում են բոլոր կամ որոշ Պայմանավորված կողմերին,
- (iv) բոլոր կամ որոշ Պայմանավորված կողմերի նկատմամբ ցանկացած մերժման, գրանցամատյանից հանման կամ միջազգային գրանցումն անվավեր ճանաչելու մասին

- (v) Հրահանգում նշված ցանկացած այլ տեղեկությունների մասին, որոնք վերաբերում միջազգային գրանցման առարկա հանդիսացող նշանի նկատմամբ իրավունքներին:

Հոդված 9ter

Վճարներ որոշ գրառումներ կատարելու համար

9 կամ 9bis հոդվածներին համապատասխան ցանկացած գրառում կատարելու համար կարող են գանձվել վճարներ:

Հոդված 9quater

Մի քանի Պայմանավորված պետությունների միացյալ գերատեսչություն

(1) Եթե մի քանի Պայմանավորված պետություններ պայմանավորվում են միասնականացնել իրենց ազգային օրենքները նշանների բնագավառում, ապա նրանք կարող են տեղեկացնել Գլխավոր տնօրենին այն մասին, որ`

- (i) միացյալ գերատեսչությունը փոխարինում է այդ պետություններից յուրաքանչյուրի ազգային գերատեսչությանը եւ
 - (ii) նրանց պատկանող տարածքների ամբողջությունը, պետք է դիտել որպես մեկ պետություն` սույն հոդվածին նախորդող բոլոր կամ որոշ դրույթները, ինչպես նաեւ 9quinqvis եւ 9sexies հոդվածների դրույթները կիրառելու հնարավորության նպատակներով:
- (2) Այս ծանուցումն ուժի է մեջ մտնում Պայմանավորված կողմերին Գլխավոր դիրեկտորի կողմից այդ կապակցությամբ տեղեկացման թվականից երեք ամիս հետո:

Հոդված 9quinqvis

Միջազգային գրանցման փոխակերպումը ազգային կամ տարածաշրջանային հայտի

Եթե ծագման Գերատեսչության դիմումի հիման վրա 6(4) հոդվածի համաձայն միջազգային գրանցումը հանվում է գրանցամատյանից բոլոր կամ որոշ ապրանքների եւ ծառայությունների համար, որոնք թվարկված են նշված գրանցման մեջ, եւ անձը, որը միջազգային գրանցման սեփականատերն է նույն նշանի գրանցման համար հայտ է ներկայացնում Պայմանավորված կողմերից մեկի Գերատեսչություն, որի տարածքում գործում էր միջազգային գրանցումը, ապա այդ հայտը կդիտարկվի այնպես ինչպես կդիտարկվեր, եթե այն 3(4) հոդվածին համապատասխան ներկայացված լիներ միջազգային գրանցման թվականին, կամ 3ter հոդվածին համապատասխան տարածքային ընդարձակման մասին գրառում կատարել թվականին եւ, եթե միջազգային գրանցումն օգտվել էր առաջնությունից, ապա այդ հայտը եւս կօգտվի նույն առաջնությունից պայմանով, որ`

- (i) նշված հայտը ներկայացվել է միջազգային գրանցումը գրանցամատյանից հանելու թվականից հաշված երեք ամսվա ընթացքում,

- (ii) հայտում թվարկված ապրանքները եւ ծառայությունները իրոք ծածկվում են այն ապրանքներով եւ ծառայություններով, որոնք շահագրգիռ Պայմանավորված կողմի նկատմամբ պարունակվում են միջազգային հայտում, եւ
- (iii) նշված հայտը համապատասխանում է կիրառվող օրենսդրության բոլոր պահանջներին, ներառյալ վճարներին վերաբերող պահանջները:

Հոդված 9(sexies)

Մադրիդյան համաձայնագրի պահպանումը (Ստոկհոլմ)

(1) Եթե որոշակի միջազգային հայտի կամ որոշակի միջազգային գրանցման համար ծագման Գերատեսչություն է հանդիսանում այն պետության Գերատեսչությունը, որը միաժամանակ հանդիսանում է սույն Արձանագրության եւ Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից, ապա սույն Արձանագրության նորմերը չեն գործի ցանկացած այլ պետության տարածքում, որը նույնպես միաժամանակ հանդիսանում է նաեւ սույն Արձանագրության եւ Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից:

(2) Ասամբլեան երեք քառորդ մեծամասնությամբ կարող չեղյալ հայտարարել (1) կետը կամ սահմանափակել նրա գործողության ոլորտը սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու թվականից տաս տարին լրանալուց հետո, բայց ոչ շուտ քան այն թվականից հինգ տարին լրանալուց հետո, երբ Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից - երկրների մեծամասնությունը կդառնա սույն Արձանագրության կողմեր: Ասամբլեայի քվեարկությանը կարող են մասնակցել միայն այն պետությունները, որոնք միաժամանակ նշված Համաձայնագրի եւ սույն Արձանագրության կողմեր են:

Հոդված 10

Ասամբլեա

- (1) (a) Պայմանավորված կողմերը հանդիսանում են նույն Ասամբլեայի անդամներ, ինչ եւ Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից-պետությունները:
- (b) Յուրաքանչյուր Պայմանավորված կողմ Ասամբլեայում ներկայացվում է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդակալներ եւ փորձագետներ:
- (c) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը կրում է նրան նշանակած Պայմանավորված կողմը, բացառությամբ յուրաքանչյուր Պայմանավորված կողմի մեկ պատվիրակի տրանսպորտային եւ բնակության համար Միության վրա դրված ծախսերի վճարման:

(2) Մադրիդյան համաձայնագրին համապատասխան դրված խնդիրների հետ միասին Ասամբլեան`

- (i) ուսումնասիրում է սույն Արձանագրության կիրառման հետ կապված բոլոր հարցերը.
- (II) Միջազգային բյուրոյին տալիս է ցուցումներ սույն Արձանագրությունը վերանայելու հետ կապված կոնֆերանսներ կազմակերպելու հարցում, հաշվի

առնելով սույն Արձանագրության կողմեր չհանդիսացող Միության անդամ երկրների դիտողությունները.

(III) ընդունում եւ փոփոխություններ է կատարում Հրահանգի այն կետերում, որոնք վերաբերում են սույն Արձանագրության կիրառմանը.

(IV) կատարում է այլ գործառույթներ, որոնք սույն Արձանագրության համապատասխան դրված են նրա վրա:

(3)(a) Յուրաքանչյուր Պայմանավորված կողմ Ասամբլեայում ունի մեկ ձայն: Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից պետություններին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ, նշված Համաձայնագրի մասնակից չհանդիսացող Պայմանավորված կողմերը ձայնի իրավունք չունեն, այն դեպքում, երբ Պայմանավորված կողմերին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ միայն վերջիններս ունեն ձայնի իրավունք:

(b) Որոշակի հարցերի քննարկման ժամանակ տվյալ հարցի քվեարկության համար ձայնի իրավունք ունեցող Ասամբլեայի անդամների կեսը կազմում են քվորում:

(c) Չնայած (b) ենթակետի դրույթնորին, եթե որեւէ նստաշրջանում որոշակի հարցով ձայնի իրավունք ունեցող Ասամբլեա ներկայացված անդամների քանակը կեսից քիչ է, սակայն հավասար կամ գերազանցում է տվյալ հարցով ձայնի իրավունք ունեցող Ասամբլեայի անդամների մեկ երրորդին, Ասամբլեան կարող է ընդունել որոշում. սակայն Ասամբլեայի որոշումները, բացառությամբ նրա սեփական գործընթացին վերաբերող որոշումների, դառնում են պարտադիր միայն հետեւյալ պայմանների պահպանման դեպքում: Միջազգային բյուրոն այդպիսի որոշումներն ուղարկում է Ասամբլեայի այն անդամներին, որոնք տվյալ հարցով ունեն ձայնի իրավունք եւ այնտեղ ներկայացված չէին եղել, եւ առաջարկում է որոշումն ուղարկելուց եռամսյա ժամկետում գրավոր հայտնել կողմ են նրանք քվեարկում, դեմ, թե՛ ձեռնպահ են այդ որոշմանը: Եթե այդ ժամկետի լրանալուն պես այդ եղանակով կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամների քանակը հավասար լինի առնվազն այն քանակին, որը չէր բավականացնում նստաշրջանում քվորում լինելու համար, այդպիսի որոշումներն ուժի մեջ են մտնում, պայմանով, որ միաժամանակ կա անհրաժեշտ մեծամասնություն:

(d) Հաշվի առնելով 5(2)(e), 9sexies(2), 12, եւ 13(2) հոդվածների դրույթները, Ասամբլեայի որոշումները ընդունվում են տրված ձայների երկու երրորդ մեծամասնությամբ:

(e) Ձեռնպահների ձայները հաշվի չեն առնվում:

(f) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն Ասամբլեայի մեկ անդամին եւ քվեարկել միայն նրա անունից:

(4) Բացի Մադրիդյան համաձայնագրին (Ստոկհոլմ) համապատասխան հերթական եւ արտահերթ նստաշրջաններից, Ասամբլեայի՝ տվյալ նստաշրջանի օրակարգում առաջարկվող հարցերով ձայնի իրավունք ունեցող անդամների մեկ չորրորդի պահանջով Ասամբլեան արտահերթ նստաշրջանի է հավաքվում Գլխավոր տնօրենի հրավերով: Այդպիսի արտահերթ նստաշրջանի օրակարգը պատրաստում է Գլխավոր տնօրենը:

Հոդված 11 **Միջազգային բյուրո**

(1) Սույն Արձանագրության համաձայն Միջազգային գրանցման հետ կապված գործառնությունները, ինչպես նաև սույն Արձանագրության վերաբերող այլ վարչական գործառնություններ, իրականացվում են Միջազգային բյուրոյի կողմից:

(2) (a) Միջազգային բյուրոն Ասամբլեայի ցուցումներին համապատասխան սույն Արձանագրությունը վերանայելու համար կազմակերպում է կոնֆերանսներ:

(b) Միջազգային բյուրոն սույն Արձանագրությունը վերանայելու համար կոնֆերանսներ կազմակերպելու հարցերով կարող խորհրդակցել միջպետական եւ միջազգային ոչ պետական կազմակերպությունների հետ:

(c) Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված անձիք վերանայման համար այդ կոնֆերանսներում մասնակցում են հարցերի քննարկմանը առանց ձայնի իրավունքի:

(3) Միջազգային բյուրոն կատարում է նաև իր վրա դրված սույն Արձանագրությանն առնչվող այլ պարտականություններ:

Հոդված 12 **Ֆինանսներ**

Պայմանավորված կողմերի նկատմամբ Միության ֆինանսները կարգավորվում են նույն դրույթներով, որոնք պարունակվում են Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) 12 հոդվածում, նկատի ունենալով, որ նշված Համաձայնագրի 8 հոդվածի ցանկացած հղում դիտարկվում է որպես սույն Արձանագրության 8 հոդվածի հղում: Բացի այդ, նշված Համաձայնագրի 12 (6)(b) հոդվածի նպատակներով, Պայմանավորված կազմակերպությունները դիտվում են որպես արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիային համապատասխան (1) դասին պատկանող, եթե Ասամբլեան միաձայն այլ որոշում չի ընդունել:

Հոդված 13 **Արձանագրության որոշ հոդվածների ուղղումները**

(1) 10, 11, 12 հոդվածներում եւ սույն հոդվածում ուղղումներ կատարելու առաջարկությունները կարող են կատարվել ցանկացած Պայմանավորված կողմի կամ Գլխավոր տնօրենի կողմից: Այդպիսի առաջարկությունները Գլխավոր տնօրենը ուղարկում է Պայմանավորված կողմերին ոչ ուշ, քան Ասամբլեայի քննարկումից վեց ամիս առաջ:

(2) (1) կետում նշված հոդվածների ցանկացած ուղղում ընդունվում է Ասամբլեայի կողմից, որի համար պահանջվում է տրված ձայների երեք չորրորդ չափով մեծամասնություն, սակայն 10 հոդվածի եւ սույն կետի ցանկացած փոփոխություն ընդունվում է տրված ձայների չորս հինգերորդ չափով մեծամասնությամբ:

(3) (1) կետում նշված հոդվածների ցանկացած ուղղում ուժի մեջ է մտնում այն բանից մեկ ամիս հետո, երբ նրա ընդունման մասին գրավոր ծանուցումները, որոնք իրականացվել են դրանց սահմանադրական ընթացակարգին համապատասխան, ստացվել են Գլխավոր տնօրենի կողմից ուղղումներն ընդունելու պահին Ասամբլեայի անդամ հանդիսացող եւ այդ ուղղումները կատարելու ձայնի իրավունք ունեցող պետությունների եւ միջկառավարական կազմակերպությունների երեք չորրորդի կողմից: Նշված հոդվածների այդ ձևով ընդունված ցանկացած ուղղում պարտադիր է բոլոր պետությունների եւ միջկառավարական կազմակերպությունների համար, որոնք ուղղումներն ուժի մեջ մտնելու պահին հանդիսանում են Պայմանավորված կողմեր կամ դառնում են այդպիսին այդ թվականից հետո:

Հոդված 14

Արձանագրությանը մասնակցելու պայմանները: Ուժի մեջ մտնելը

(1) (a) Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի ցանկացած մասնակից-պետություն կարող դառնալ սույն Արձանագրության մասնակից:

(b) Բացի այդ, ցանկացած միջկառավարական կազմակերպություն կարող է դառնալ սույն Արձանագրության մասնակից, հետեւյալ պայմանները պահպանելու դեպքում՝

- (i) այդ կազմակերպության մասնակից-պետություններից առնվազն մեկը հանդիսանում է արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի անդամ.
- (ii) նշանների գրանցման համար, որոնք ուժ ունեն այդ կազմակերպության տարածքում, նշված կազմակերպությունն ունի տարածաշրջանային գերատեսչություն, եթե այդպիսի գերատեսչությունը 9quater հոդվածի համաձայն չի հանդիսանում միայն ծանուցման օրյեկտ:

(2) (1) կետում նշված ցանկացած պետություն կամ կազմակերպություն կարող են ստորագրել սույն Արձանագրությունը: (1) կետում նշված ցանկացած պետություն կամ կազմակերպություն, եթե ստորագրել է սույն Արձանագրությունը, կարող է ի պահ հանձնել վավերագրերը, սույն Արձանագրության ընդունման կամ հավանության փաստաթղթերը կամ, եթե նրանք չեն ստորագրել սույն Արձանագրությունը, սույն Արձագրությանը միանալու մասին ակտը:

(3) (2) կետում նշված ակտերը ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

(4) (a) Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում չորս վավերագրեր, ընդունման փաստաթղթեր, հավանության կամ միացման մասին փաստաթղթեր ի պահ հանձնելու թվականից երեք ամիս հետո պայմանով, որ այդ փաստաթղթերից առնվազն մեկը հանձնված է տրված Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից պետություններից մեկի կողմից, եւ այդ փաստաթղթերից առնվազն մեկը հանձնված է Մադրիդյան համաձայնագրի (Ստոկհոլմ) մասնակից չհանդիսացող պետության, կամ (1)(b) կետում նշված կազմակերպություններից մեկի:

(b) (1) կետում նշված ցանկացած այլ պետության կամ կազմակերպության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն թվականից երեք ամիս հետո, երբ վերջինիս վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ նրան միանանալու մասին ծանուցել է Գլխավոր տնօրենը:

(5) (1) կետում նշված ցանկացած պետություն կամ կազմակերպություն, իր վավերագրի, ընդունման նախն փաստաթղթի, հավանություն տալու կամ սույն Արձանագրությանը միանալու ակտի մեջ կարող են հայտարարել, որ պաշտպանությունը, որն առաջացել է սույն Արձանագրության համաձայն կատարված միջազգային գրանցման արդյունքում՝ մինչև նշված պետության կամ կազմակերպության նկատմամբ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելը, չեն կարող տարածվել նրանց վրա:

Հոդված 15

Արձանագրության չեղյալ հայտարարումը

(1) Սույն Արձանագրությունը գործում է առանց ժամկետի սահմանափակման:

(2) Ցանկացած Պայմանավորված կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով:

(3) Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր տնօրենի կողմից ծանուցումն ստացնալու օրվանից մեկ տարի հետո:

(4) Սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարման իրավունքը Պայմանավորված կողմը չի կարող է օգտագործել մինչև տվյալ կողմի նկատմամբ սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու թվականից հինգ տարին լրանալը:

(5)(a) Եթե նշանը հանդիսանում է միջազգային գրանցման առարկա, որը չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելու թվականին գործում է սույն Արձանագրությունը չեղյալ հայտարարող պետության կամ միջկառավարական կազմակերպության մեջ, ապա նշված գրանցման սեփականատերը նույն նշանի գրանցման համար կարող է հայտ ներկայացնել այդպիսի պետության կամ միջազգային կազմակերպության Գերատեսչություն, որը կքննարկվի ինչպես, եթե այն ներկայացված լիներ միջազգային գրանցման թվականին 3(4) հոդվածին համապատասխան կամ տարածքային ընդարձակման մասին գրառում կատարելու թվականին 3ter(2) հոդվածին համապատասխան, եւ, եթե գրանցումը օգտվել էր առաջնությունից, ապա այն կօգտվի նույն առաջնությունից, պայմանով, որ.

- (i) այդպիսի հայտը ներկայացված է չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելու թվականից երկու տարվա ընթացքում,
- (ii) հայտում նշված ապրանքները եւ ծառայությունները իսկապես ծածկվում են միջազգային գրանցման մեջ եղած ապրանքների եւ ծառայությունների ցանկով, այն պետության կամ կազմակերպության նկատմամբ, որոնք չեղյալ են հայտարարել սույն Արձանագրությունը, եւ
- (iii) այդպիսի հայտը համապատասխանում է կիրառվող օրենսդրության բոլոր պահանջներին, ներառյալ վժարներին վերաբերող պահանջները:

(b) չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելու թվականին (a) ենթակետի դրույթները կիրառվում են նաև ցանկացած նշանի նկատմամբ, որը հանդիսանում է միջազգային գրանցման առարկա եւ գործում է չեղյալ հայտարարած պետությունից կամ միջկառավարական կազմակերպությունից այլ Պայմանավորված կողմերում, եւ որի սեփականատերը այդ չեղյալ հայտարարելու պատճառով այլևս իրավունք չունի միջազգային հայտ ներկայացնելի 2(1) հոդվածին համապատասխան:

Հոդված 16

Ստորագրումը: Լեզուներ: Ավանդապահի գործառույթները

(1) (a) Սույն Արձանագրությունն ստորագրվում է մեկ օրինակից անգլերեն, իսպաներեն եւ ֆրանսերեն լեզուներով, եւ Գլխավոր տնօրենին ի պահ է հանձնվում այն բանից հետո, երբ այն փակ կլիին Մադրիդում ստորագրելու համար: Երեք լեզուներով տեքստերը հավասարապես վավերական են:

(b) Սույն Արձանագրության պաշտոնական տեքստերը մշակվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կառավարությունների եւ կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո, արաբերեն, իտալերեն, չինարեն, գերմաներեն, պորտուգալերեն, ռուսերեն եւ ճապոներեն լեզուներով, ինչպես նաև այն լեզուներով, որոնք կորոշի Ասամբլեան:

(2) Սույն Արձանագրությունը բաց է Մադրիդում ստորագրելու համար մինչև 1989 թվականի դեկտեմբերի 31-ը:

(3) Գլխավոր տնօրենը սույն Արձանագրության ստորագրված եւ անհրաժեշտ ձևով Իսպանիայի կառավարության կողմից վավերացված տեքստերը երկու օրինակից, ուղարկում է բոլոր այն պետություններին եւ միջկառավարական կազմակերպություններին, որոնք կարող են դառնալ սույն Արձանագրության մասնակիցներ:

(4) Գլխավոր տնօրենը գրանցում է սույն Արձանագրությունը Միացյալ Ազգերի Կազմակերպության Քարտուղարությունում:

(5) Ստորագրման, վավերագրերն ի պահ հանձնելու, ընդունման, հավանություն տալու մասին փաստաթղթերի կամ միանալու մասին ակտերի, ինչպես նաև սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու մասին, նրա ցանկացած փոփոխության, ցանկացած չեղյալ հայտարարման եւ սույն Արձանագրությունում նախատեսված ցանկացած դիմումի մասին գլխավոր տնօրենը ծանուցում է բոլոր պետություններին եւ միջազգային կազմակերպություններին, որոնք կարող են դառնալ կամ արդեն դարձել են սույն Արձանագրության անդամ: